



# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶՊԵՏ

<< >> \_\_\_\_\_ 2019թ.

ք.Գյումրի, Գ.Նժդեհի 16

N: \_\_\_\_\_

հեռ. (0312) 3-26-10

## ՈՒՂԵՐԶ ԱՇԽԱՏԱՆՔԻ ՕՐՎԱ ԱՌԹԻՎ

Միբելի՝ շիրակցիներ

Սրտանց շնորհավորում եմ Աշխատանքի օրվա՝ Մայիսի 1-ի կապակցությամբ: Աշխատանքը մարդու հիմնական իրավունք է ու բարիք, մարդկային արժանապատվությունն արտահայտելու և աճեցնելու միջոց: Այդ պատճառով ազգաբնակչության զբաղվածությունը նպատակ է, որը պարտավոր է իր առջև դնել դեպի արդարության և զարգացմանը կողմնորոշված ցանկացած տնտեսական հասարակարգ: Ցավոք, այսօր Շիրակի մարզում ունենք գործազրկության բարձր ցուցանիշ:

Մենք ընդունում ենք, որ գործազրկությունն իրական սոցիալական աղետ է հատկապես երիտասարդ սերնդի համար, և ամեն ջանք գործադրում ենք մեր քաղաքացիների աշխատանքային իրավունքների պաշտպանության գործում:

Հարգելի՛ հայրենակիցներ, շնորհավորում եմ Ձեզ տոնի առթիվ՝ մաղթում արժանապատիվ աշխատանք, քանզի այն երկրի ամրապնդման և զարգացման հիմքն է:

Տ.ՊԵՏՐՈՍՅԱՆ